ընկալար. ⁷ խա, խը մարմնոյ. եգ, կէ մարմնոց. կգ մարմնոյ ծննդեամբ.
⁸ եթ խոյի. միւսները խոյին. ⁹ կգ կախեալ. միւսները ընկալեալ.
¹⁰ եղ, եգ, խա, խը, կգ, կէ, հգ զմեղաց բարձողն տեսեալ. ¹¹ եղ, եգ
պարթեւական. եգ, եթ, կգ, հգ պարզեւական. ¹² կգ եսայիա. ¹³ եղ որ.
կէ որդւոյն. ¹⁴ կգ, չուսնե յերկրէ. ¹⁵ եղ բղիսեալ. կէ բղիսեալ ի կաթին.
¹⁶ կգ ժառանդորդ հայ՛. ¹⁷ խա, խը անուան. ¹⁸ եղ փայլին, կգ փայլ.

Առաջակ 19 ձայնի փառատրութեան՝ ի ձեր խնճոյս 20 խըր-
բախութեան, համաձայնեալ զաւրաց 21 վերին՝ երգեմք զփառս
22 ի բարձունս:

Գտնուում է իթ 304թ (մի տուն միայն) խը 233ա:

93 Հի, մի. Առուբրդ սրբաց սուրբ երրորդութիւն, որ 1ի սրորեից
2 սրբասաց ձայնիւ միշտ փառաբանիս, ընկալ ի մէնջ 5 զաւրչ-
նութիւնս ի յիշատակի յաղթող 4 վկայիցս. մաղթանաւք
սոցա խնայեա ի մեզ:

Արարիչ հրեղինաց և հողեղինաց անսկիզբն հայր, որ
ընտրեցեր ի մարդկանէ նախ քան զլինելն աշխարհի զգասս
վկայիցն, լինել սուրբս և ամբիծս և արի խոստովանողս ան-
մաշ արքայիդ. մաղ”.

Պամից բոլորից մասանց եղելոց որդի աստուծոյ, որ
յաղթեցեր աշխարհի մեղաց և մաշու մարդկային ընու-
թեամբ, և ետուր զաւրութիւն հաւատով կոխել զբանսար-
կուն և զերկիւղ մաշու. մաղ”.

Գերագոյն վերստին ի ջրոյ զմարդիկ ծնանիս հոգի
աստուծոյ, որ զփառակցին քո զաւրացուցեր զվկայսն ի
մարտի յաղթել թշնամոյն, և արիարար հեղուլ զարիւնս
իւրեանց ընդ արեան զմեղ փրկողին. մաղ”.

Ի հանդէս մարտի ձեր սուրբդ սարդիս զուարձանան
զուարթունք երկնից, և պարեն ընդ մեզ՝ տաւնելով զաւր
յիշատակի ձեր, քաջ նահատակք. զի մարմնով անմարմին
եղէք գերագոյն ձեր չարչարանաւք. մաղթեա փրկել զմեղ
ի մեղաց մերոց:

Սիրով վառեալ յիսուսի վկայ նմին մարտիրոս բաղ-
ձալի մանուկ, որ զերկրաւորս արհամարհեցեր 5 մեծութեան
երկնաւորին ցանկացար փառաց, և պսակեցար յերկնաւոր
թագաւորէն, զոր քաջութեամբ խոստովանեցար. մաղթեա
փրկել զմեղ ի մեղաց:

92 19 իգ, հգ ձայնի. միւսները ձայնիւ. 20 իգ ուրախութեան.
21 խը, խը երկնից 22 իգ, հգ ի յերկինս.

93 1 իթ սրովբէիցն. 2 խը երեքսրբեան ձայնիւ. 3 խը դօրհնաբանու-
թիւնս. 4 իթ վկայից. 5 Զեռ. մեծութիւն.

Գտնւում է ժէ 49ա:

94 դէս սպանի. Այս շատակ կենդանի և զաւրական երկնաւոր թագաւորին, որ ընտրեցար յաշխարհէ լինել վկայ հաւր միածնին. աղաչեմք զքեզ անդադար բարեխաւաեա առ տէր փրկել զմեզ ի փորձութենէ:

Անմարմն ի մարմնի մենամարտեալ արիաբար ընդդէմ՝ մահու, որ յաղթեցեր անաւրինաց ի հոգեոր պատերազմին. աղաչեմք'.

Փողովեալքս ի տաճարի անուանդ քում արագահաս ոռւրբդ սարգիս, որ արձակիչք ես կապելոց լեր աւգնական քո տաւնողացս. աղաչեմք'.

Գտնւում է ժէ 47ը. Նարականիս գըիչ Սարգիս երեցը Օքնութեւնս ընծայսում է Բարձրբերդցի Վ.արդան վարդապետին՝ ասելով, «զնզաւը արքաին զաւրեղ զինա(կիր)» . . Վ.արդանա է ասացեալ» . թղ. 223բ: Սարգիս երեցի այս վկայութեւնով պարզւում է նաև մի պատմական երկի ճշմարտութեւն, և նրա հեղինակի ով լինելը. այն է, շարականս գըող Վ.արդան Բարձրբերդցին ևս վկայում է, որ Վ.արդան Արեւելցին է գրել երեն ժամանակի զէպքերի Պատմութիւնը, և ոչ Ենքը, ինչպէս ոմանք համարում են: Եւ այս բանս յայտնում է Ենքը շարականիս երկրորդ տան մէջ, ասելով զօրավարիս և իւր Մարտիրոս որդւոյ կրած կապանքի և տանջանքի մասին, «Յերեւեալս ի պարս Խորին խորասան . . , ի մաւտ ի քաղաքն որ կոչի Տամզան, ի դաշտ ծաղկածին զոր յիշէ Վ.արդան, ի յամուրն անառ Քրդաքաւ անուան, անդ ուր զՄարտիրոս արկին ի կապան»: Երկու Վ.արդաններս իրաք հետ չշփոթելու համար, հարկ ենք համարում զնել նրանց ընորդ հայրենիքի և տարեթուերի տարբերութեւնները, «Վ.արդան Բարձրբերդցի վարդապետ . . , սխալէին [ոմանք], որք զմեծ վարդապետն Վ.արդան՝ զհեղինակ պատմութեան . . ընդ ոմա չփոթէին»: զենա Արեւելցի է և + յամի 1271+ իսկ ոս է Բարձրբերդցին, որ և յամի 1286 կոչէր զինքն աշակեցտ (Յովհաննու) Արքայեղքօքն»* Արտուան. 142:

Արդարեւ Վ.արդան Արեւելցին իւր Պատմութեան մէջ յեշում է շարականիս մէջ յեշատակուած դաշտը՝ այսպիսի ձևերով, «Լուեալ Ելտկուզն գայ յայ-

ըեցեալն . . . Պուին . . . , և մըմռեալ իբր զգագան կատաղի՝ դայ ի Մըեն . . . , և գառնայ ի դաշն Դաղայ. և ասաց այլել զնաշն հոչակաւոր»: «Իսկ Մոլար նոյնին . . . (էառ) զԳագ անուանի բերդ . . . , ուր կայ հոչակաւոր և սուրբ ուխտն Խաչ և Եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավտրին, օքնեալ ի սրբոյն Մեռլովայ վարդապետէն և թարգմանչէն Հայոց, որ կայ ի գլուխս Գագայ, և հայի ի դաշտն լայնանիստ եւ երկայնատարած»: «Յորում ժամանակի լցաւ դաշտն Գագայ անթիւ և անհամար հեծելօք յամենայն ազգաց անօրինաց հաւաքեալ, որ կամեցան այլել զոռւրբ Խաչն՝ որ յանուն զօրավարին Սարգսի»: Պատ. Վարդան վար. 1862. Վնտկ. եր. 127. 144—145. 123:

95 ՀԱ. Ծղաւր արքա[J]ին զաւրեղ զինակիր, որք յուսով կարգան, արագաժաման յայտնի աւգնական համազգի մարդկան. ի քէն բելիար և զաւրք իւր զողան, ընտրեալ և զովեալ սարգիս զաւրական, մարտիրոս որդ[ւ]ով քո[J]ին սիրական. աղաչեմք զքեղ լեր մեզ աւգնական:

Ճառիս ճշմարիտ և յարանման յերեեալս ի պարս խորին խորասան, վայելուչ վայրին ի մաղանդարան, ի մաւտ ի քաղաքն որ կոչի 1 տամկան, 2 ի դաշտ ծաղկածին՝ զոր յիշէ վարդան, ի յամուրն անառ քրդաքաւ անուան, անդ ուր զմարտիրոս արկին ի կապան. աղաչեմք զքեղ լեր մեզ աւգնական:

Բարձրագոյն գահուն ի թագաւորական ընտրեալ և զովեալ սարգիս զաւրական. որ պարտէր զմարտ պատրող զիւական, այրեցեր զբաղին կոոցն պաշտաման, 3 շարժեր շազուհոյ ցաւ հոդ[ւ]ոյ մահուան, ով սուրբ զաւրական և արիական. աղաչեմք զքեղ լեր մեզ աւգնական:

Ով սուրբ վարդապետ ընտիր և արժան, մեսրաւարագմաջան և հայոց թարգման. որ զնշանագիրն քեւ յայտնեցան, և պակասութիւն հայոց լցան, ըստ այնմ աւրի-

95 1 Եւ մտեալ ի Մազանդարանն (Հեթում թագաւոր և իւր ուղեկիցները) . . . , և ապա յաշխարհն Արազոյ ի սահմանս Մուլժեակին, ի Տամզայն» Պատ. Կերակոսի, Մոսկ. 1858. եր. 222. 2 «Ամենասուրբ երրորդութեան» յայտնի Օքնութեան մէջ, «ի դաշտ ծաղկածին». աես և Վարդանի պատմութիւնից վերև մէջ ըերած հատուածները: 3 Զեռ. շարժէր շապան:

Նակի կանգնեցեր նշան՝ ի մէջ մացառաց և ի խուժաստան, բարձր ի զիտակի Գագա զագաթան, որով պահպանի քառանկիւն սահման, և փայլէ լուսով մեծ արեգական, շահաւետ շարժումն շրթունք ի բերան, անուն սարսելի սարդիս զաւրական, մարտիրոս որդւովզ քո[J]ին սիրական, աղաչեմք զքեզ լեր մեզ աւզնական:

Գանւում է իդ 268m+ իթ 30 իր (մի տա՞ն և մի տող), հգ 41ր+

96 ՀԵ, ՏԱՅ Խ յարմատոց հարց ընտրեալ սուրբդ սարդիս և մարտիրոս. մեզ ¹ ծաղկեցայք զաւազան հոգւոց, բողբոջեալ պարաբա աւծութեամբ ի դաշտն Ծաղկեայ, և արձակեալ պտուղ ի զլուխս Գագա. բարեխաւսեցէք առ տէր ² վասն անձանց մերոց:

Սոսկալի աղաւթից զինուք մենամարտեալ ընդդէմ չարին հաւատոց կրօնիւք, որով պարտեցէք զիշխանն ստորին և ընդ նմին զվիշապն առաջին. բարեխաւսեցէք[”].

Եկեղեցեաց ուղղափառաց համախմբեալ այսաւը տաւնեմք զյիշատակ վեհից ճգնողաց, և աղաչեմք զուշիմնդ յուշի հրաշագործել նշանս ի Յիաչ և յեկեղեցի. բարեխաւսեցէք[”].



96 1 իթ ծաղկեցար. 2 իթ վասն մեր. 3 Այս Խաչը թերեւ Վարդանի պանի պատմութեան մէջ յիշատակուած ոխտատեղին է:

ՏՕՆՔ Ի ՊԱՀԱ ՔԱՌԱՍՆԵՐՈՐԴԱՅ

Գանուռմ է ժ 43ա կրօնատ. ժդ 58ա. ժէ 50ա. լը
76ա. խա 58ր. խք 95ա. ժա 83ա. ժդ 53ա. կդ 907. կէ
70ա կրօնատ. կթ 56ա կրօնատ. լէ 70ր ունի միայն ձաւ-
շուն: ԺԳ դարում գրուած մի քանի ընակը նարա-
կաններից՝ որպիսիքն են ժէ, լը, կէ և այն, յայտնի
երեսում է, որ զօրավարիս բովանդակ շարականները
դրուել են ծբ դարում և երգուել են եկեղեցում:
Այս մասին Սարգիս երէցը ասում է իւր Տօնացուցում՝
որ գանուռմ է իւր նարականում (ժէ). «Ո.ռ.ջի շա-
րաթին նը աւըն Թէոդորոսի զաւըավարին տաւնէ.
շարակներ զիւր նորն տուա. և թէ ոչ դէ Զինուորու-
թիւնք հրեշտակ(աց). մկ Զինաւորն քրիստոսի. և
Մարգաց 19.» թղ 233ա: «Ազուհացիցն առաջին շա-
րաթ աւըն Թէոդորոսի զաւըավարի» • 680 Մնրումն կամ
Խազմիր. թղ 180ա: Զօրավարների կամ Զինուորների
տօների կատարման մասին կարգում ենք նաև Վիեն-
նայի մատենադարանի 528 նարականի մէջ այս հետ-
աքրքի տեղեկութիւնը. թղ 30ր, «Կատարեցաւ
[վերջացաւ] տէրունի շարակներս, և այժմ սկսաննեմք
զսրբոց յիշատական կարգաւ. նաև հրեշտակաց, ապա
մարգարէցը և Յավհաննու [մկրտչի], ապա առաքելոց
և հայրապետաց, ապա թագաւորաց և զինուորաց,
մարտիրոսաց, որ եղեալ է սուրբն նիրսէս կլայնին»: Արդ՝
եթէ տօների կամ շարականների այս կարգը նոր-
հալին է դրել, նորհալին է սահմանել որ Զինուոր-
ների տօները տարէց տարի անխափան տօնուեն,
հետեւպէս և զինուորների շարականները ինքն է դրել.
ուրիշեաւ Զինուորների այս կարգը չկաց մեր շարա-
կանների հին կարգի մէջ: Ահաւասիկ այդ հին կարգը,
որ յառաջ ենք բերում կիրակոս պատմագրից, և
նարականների մէջ այժմ էլ պահպանուած են Կի-
րակոսի ընծայած ձեռվլ: Կիրակոսը յիշատակելով
Սահմակ պարթեին և թուելով նրա աշակերտների
գրական գործերը, ու համնելով մինչեւ «Մեծն Սիւ-
նեաց Ստեփաննսս եպիսկոպոս», որ ապրեց և և դա-

բերում և գրեց Աւաղ օրհնութիւնները՝ տառւմ է, «Արտ-
րին և երգո շարականաց քաղցը և գեղեցիկ եղանա-
կու և մեծ խորհրդով Ծննդիանն ըրխառուի, և Քառաս-
նօրիայ զալստեանն ի տաճարն, Խկրտութեանն, և Եկաւորու-
թեանն ի Բնիթանիա եւ յերուսաղէմ, Մեծի շարաթուն չար-
ջարանաց և Յարութեանն, Համբարձմանն և Հոգուոյ զալստեանն,
Խաչի և Եկեղեցւոյ, և այլ Տօնից տէրունականաց, և Սրբոց
ամեննեցուն, Ապաշխարութեան և Ամենայն ննչեցելոց . . . , որ
մինչև ցայտօր պաշտի եկեղեցի Հայաստանեաց».
Պատ. Կիր. Մոսկ. Եր 17—18: Արդ՝ ինչպէս տեսնում
է ընթերցողը տօնելի կամ շարականների այս հին
կարդի մէջ չկայ Զօրավարների կամ Զինուորների կարդը.
իսկ այդ Կարդի մէջ Զօրավարների կամ Զինուորների Կարդը.
Գրիգոր միուր վկայատէր (տես Կանոն սրբոյն Գէորգայ
Համար 84), և ապա իւր եղբայր Շնորհալին, այն է,
Զօրավարիս Հարցը իւր սարօք, և իւր՝ Որ ընտրեցիր
իսկզբանէ զինանոյ եղեալն յայտնի Մանկունքը; Սոււրբ Գէոր-
գի Քաջամարտիկ շարականը. տես Համար 83. և իւր՝ Ով
սուրբ Գէորգ պարծանիր ազգի մարդկան յայտնի Մանկունքը;
Սոււրբ Սարգոսի Ամենասուրբ երրորդութեան յայտնի Օրհ-
նութիւնը, և իւր՝ Զինաւորն ըրխառուի ի հօրէ առեալ
պարզիւն յայտնի Մանկունքը; Եւ այս բոլորեց՝ իւրեւ
ըաժմին եկեղեցւոյ, այժմ՝ մնացել են միայն երեք զօ-
րավարներիս Մանկունքները և սոււրբ Սարգոսի Օրհնու-
թիւնը; Բոլոր հին և նոր Մանկունքների և նըանց
հեղինակների մասին տես նարական Կիրդի հայրա-
պիտի. Համար 101: Սոււրբ Սարգոսի Ամենասուրբ երրոր-
դութեան շարականի համար շատ տեղին և իրաւամը
առում է Հ. Աւետիքեան, «Յաղակո այսը շարա-
կանի ոչ ասեն օրինակը՝ յումմէ իցէ արարեալ; Ստե-
փաննոս քահանայ յոտանսաւորի իւրում ընծայէ
Վարդանայ վարդապետի; Իսկ այլոց հաւանելի երեւ-
ցաւ տալ Ներսեսի Շնորհալւոյ, հայեցեալ ի նմա-
նակցութիւն ոճոյ բանիցն. զոր և պատեհութիւն
իրացն հաւանեցուցանէ; Վասն զի զհարազատ վկա-
յաբանութիւն Սարգոսի զօրավարին՝ նա ինքն Շնոր-
հալին ի խնդրոյ Գէորգեայ վարդապետի հետազօտեալ
եղիս ի մենաստանի ասորոց. և ինքնին յարմարեալ
զթերութիւն թարդմանութեանն համարակեաց յե-
կեղեցի հայոց . . . Վասնորոյ ոչ ընդդէմ է կարծել՝
թէ գիւտ ցանկացեալ պատմութեանն զարթոյց ի
նմա զերաժշատականն հոգի՝ երգել ի ցնծութիւն

դգովաստնական քանահիւսութիւնս» • Բաց. Նրկնց. Եւ •
149: Սարգսի վկայաբանութիւնը տես Սովերը Հայիակնը
համար. ԺԶ: Գալով Ստեփաննոս քահանային, այս քա-
հանան ևս անտեղի և սուտ չէ գրում Վարդանի
մասին. Վարդանը ևս մի երգով յարդել է մեծ զօ-
րավարիս յեշատակը, սակայն Վարդանի գրածը
Ամենասուր երրորդութիւնն օրհնութիւնը տես համար 95,
որը Սարգսիս երէցը ընծայում է Վարդանին ասելով,
«զգաւը աըքախն զաւցեղ զինա(կեր)» • Վարդանա է
ասացեալ» • Ժէ թղ 223ր:

«Կանոն Թէոլոգոսի զաւըալարի».

97 այ. հց. Որ ի հանդէս մեծ ճղնութեան արիարար պատե-
րազմեալ յաղթող գտաւ ի մարտի սուրբ վկայն թէոլոգոս՝
քեզ խոնարհեալ երկրպագէր. քանզի գու ևս տէր ասառւած
հարցն մերոց:

Որ պատարագ հաճոյական հաւը մատուցաւ սուրբ
անարատ, եղեալ վկայ ճշմարիտ քրիստոսի թագաւորիդ՝
նորոգողիդ զտիեզերս. քանզի գու».

²Որ գասուց երկնաւորաց անմարմնական հողեզինաց
զուգապէս պարակցեալ, հզերկնայինն առեալ զպսակն ի
յերկնաւոր թագաւորէդ. քանզի գու».

• Զտէր աւրհնեցէք բարձր արարէք զնա յաւիտեան:

Որ հրակիզմամբն կործանեաց զանաւինաց սնոտի
պատկերսն, 7 նախանձայոյդ ⁸լինելով արարչին արարածոց.
բարձր».

Եկայք նոր ⁹ժողովուրդք, հաւատացեալք քրիստոսի,
ընդ նմին աւրհնեցէք զճշմարիտ սուրբ հոգին, որ ¹⁰նորու-
գաւզ է աշխարհի. բարձր».

98 այ. * Պայծառացեալ ժողովուրդք քրիստոսի ցնծութեամբ

97 4 լը սուրբն. 2 ժզ, լը, ժա Որ ի դա» • 5 ժզ, խա, ժա զերկնային •
4 ժէ, լը, խա, ժա, ժզ, կզ պսակ • 5 ժզ Թագաւորին. 6 լը, ժզ
պատկերն, ժա պատկերս. 7 ժզ զնախանձայոյդ. 8 ժէ լինելոյ զարարիչն •
9 ժզ, խա ժողովուրդ • 10 ժզ նորոգողն է. միւսները նորոգաւդ •

98 4 ժէ պայծառացիք.

տաւնեսցուք զյիշատակ սրբոյն թէոգորոսի. ունելով միշտ
ըարեխաւս առ տէր վասն անձանց մերոց:

Ի պարծանս ազգի մարդկան կատարեցաւ քաջ² նա-
չատակին, և մատնեաց զանձն իւր պատժոց և նեղութեանց.
ունելով միշտ".

Թես ազաւնւոյ ստացեալ սրբոյն թռուցեալ ի վերինն
սիով, շառաւիդ արմաւենեաց ի վերինն երուսաղեմ. ու-
նելով միշտ".

99 Այսպիս. Անցաղթելի նահատակութիւն քո՞ ով սուրբ թէո-
գորոս, զթշնամին կապեաց ի յանլոյծ² կապանս, ու զե-
րեաց զգերութիւն հակառակողին:

Յաղթող ի մարտի և աճեալ ի հաւատոս, իշխանու-
թիւն առեր ի վերայ իմի և քարրի զգնալով³ կոխել⁴ զա-
ռիւծն և զկամակոր վիշապն:

8 ի քո ի նահատակութիւնոր, ով սուրբ թէոգորոս,
պայծառացեալ եղեն սուրբ եկեղեցիք ի կանգնել զնշան
յաղթութեան խաչին:

ԴՅ. Ա. Որ ընտրեցեր իսկզբանէ: (կայ տպ. նար.)

100 Եյ. Տ. Հ. Յաղթող թագաւորին քրիստոսի քաջ զինաւոր
և եկեղեցւոյ անպարտելի նախամարտիկ, ով սուրբ թէո-
գորոս, ազաքեա զտէր վասն² տօնողաց զյիշատակս քո:

Ի հանդէս ճգնութեան քո հանխեալքս ամենեքեան
ի քո բարեխաւսութիւնդ³ ապաւինիմք, ով մեծ նահա-
տակ. ազաքեա".

Որ ընդ ամենայն սուրբս⁴ ընկալար ի քրիստոսէ⁵ զյաղ-
թութեան փառաց պատկին, ով սուրբ թէոգորոս, սիրող
քրիստոսի. ազաքեա".

98 2 ժղ, խա նահատակ.

99 4 ժղ, խա նահատակութեամբ. Ժա նահատակութեան. 2 ժէ կա-
պանսն, 5 ժտէւ պարտեաց զզաւրութիւն հակառակողին, գերեաց. 4 ժէ ա-
ճեալ. միւսները ամեցեալ. 5 ժղ զնալ. 6 լը կոխելով. 7 ժղ զառիւծ.
8 ժղ, լը ի բոյ նահատակութեանդ. ժէ, խա, ժղ ի բոյին նահատակու-
թեանդ. Խը, ժա ի բոյին նահատակութիւնդ. կզ ի բո նահատակութիւնդ.

100 4 կզ թէոգորոս սիրող քրիստոսի. 2 ժղ տաւնողաց. 5 կզ կանխեալ.
4 ժղ ապաւինեալ. 5 ժղ ով սուրբ. Խա ով սուրբ նահատակ սիրող քրիս-
տոսի. 6 ժղ ընկալայք. 7 լը զյաղթութիւն,

Դանեում է ժէ 198ա: Նախականիս գրիչ Սարգիս
Երեցը ասում է իւրօնացուցում, «Եթե աւքն Տաւո՞ն կիւրզի
Երուսաղէմի հայրապետի, հյու Որք հաղորդեցան շար-
չարանաց. մի զիւր նորն ասա. և թէ ոչ Զառաջ-
նորդո». թղ 223ա: «Երկրորդ շաբաթն աւքն. Կիւրզի
Երուսաղէմի հայրապէ՛» և մաւր նորա Եւղաբա.» 680
Մանրուսումն կամ Խաղիքը. թղ 180ա: Իբրև յատուկ
Մանկունքների յօրինող և հեղինակ, շաբականների
գրիչները ընծայում են մեզ Երկու հայրապետներ,
այն է, Պետրոս գետագարձ, որ ապօքց ԺԱ-ՐԳ դա-
րում, և ԺԲ-ՐԳ դարում Կերոչս Շնորհալի: Պետ-
րոս գետագարձին ժամանակակից Արխոտակէս Լաս-
տիվերացի պատմագիրը, շատ ի մօտոյ ճան աչում է
հայրապետիս, իւր բոլոր հունք ու բունքով (էութեւն).
տես Արիս. Լատո. 1844. Վնտկ. գլ Ժ, ԺԴ, 60: (Տես
Նաև Մատթէոս Ուռ. 1898. Էջմ. Եր. 10, 50, 67, 75—78):
Բայց և այնպէս հայրապետիս ուսման և գետութեան
մասին դըեթէ մեզ ոչինչ չէ աւանդում. և հետեա-
պէս ոչ մե Երկ, ոչ մե Պահան գործ այս կաթուղի-
կոսին չէ նուիրում: Բայց և այնպէս մեր Ազգի նո-
տարներից չգիտեմ ի՞նչ պատմական հին և զօրեղ
փաստերի վերայ հիմնուելով՝ հայրապետիս են ըն-
ծայում Մարտիրոսաց և Հանգստիան Երեելի շաբա-
կանները, և յատուկ Մանկունքներից շատերը՝ ասելով,
«զՄարտիրոսաց կարգն տէր Պետրոս». 622 Ժվլծու.
թղ 299ր: «զՄարտիրոսացն և զԱռաւաւտ Երգերն
տէր Պետրոս կաթողիկոսն ասաց». ժէ 223ր: «զՀան-
դըստեանն և զՄարտիրոսացն և զբաղումն ի մանկո-
տեացն Պետրոս գետագարձն». 219 Առուածաշունչ
թղ 7ա: «զՀանդստեանն և զՄարտիրոսացն Պետրոս
գետագարձն, և ևս զբաղումն ի մանկոտեացն». Ժը
674: Թող այսպէս լինի. դուցէ Մանկունքները գըել է
հայրապետս, կամ գրուել են հայրապետիցս առաջ,
որովհետեւ նրանց մէջ կան նաև ի, թ, և Ժ դարերի
բառեր ու ոճեր, որպիսիքն են, վերաբուսանիմ,
հանդիսագիր, լուսազարդէմ, հեղաբաննեմ (հանդարտ
խօսել) դեռաբուսիլ, աստուածաբեալ, ծաղկապարդ,
եղանալ (միանալ, մէկ տեղ գալ), եղաբան (միա-
բան, խօսքները մէկ), լուսազարդ, ախտակըմ,
ևայլն: Մարտիրոսաց և Հանդստեան շաբականները
հայրապետիս ընծայելը չենք ընդունում. և այս
մասին կիսունք իւր տեղում: Պալով հայրապետիս
դրած Մանկունքներին, նոքա շատ պարզ, որոշ և

կարգաւ զըռւած են Սարգիս Երէցի Շարականի մէջ, և իբրև Խորագիր՝ իւրաքանչիւր սըրի անուան հետ ու նեն բառա Շարական, և են, — Հայրապետաց, Ով հրաշալի նախահարր (թերեւս)։ թղ 53ր։ «Շարական սըրոյն Սանդըմտոյ, Քեւ պարծի այսաւր»։ թղ 168ր։ «Շարական Կիւրակոսի և Յուղիտեա, Յարմատոց բարեաց»։ թղ 201ա։ «Շարական սըրոց Սուրբիառեանցն, Ստուգութեամբ տեղեկացեալը»։ թղ 202ա։ «Սուրբոյն Վահանա (գողթնացւոյն), Զարմանալի է ինձ»։ թղ 202ա։ «Շարական սըրոց Ատոմեանցն, Աղաջիմք զրեզ տէր»։ թղ 202ա։ «Շարական սուրբոց Վարդանացն, Արիացեալը»։ թղ 206ր։ «Շարական սը քահիցն Վեռնդեանց, Երդեմք ձեղ երկս»։ թղ 209ա։ Արգ՝ գըրեչների ընծայած «քաղում մանկանիրից» միայն սոքա են Գետագարձենը, որոնք իբրև հին ու անդքանիկ Մանկունքներ, գըռւած են կրնատ գըռութեամբ (բացի Յուղիտեանց «Վարդաղոյն վառեալ-ից», որի տների գլխագըրը կապում են Վարդի)։ Իսկ ըստ Սարգիս Երէցի Շարականի ննորհալու գըռածները են, — Սարգիս զօրավարի Ալնասուրը երրորդութեան, և մկը Զինաւորն ըրիստոսի։ թղ 49ա։ Թէոդորոս զօրավարի մկը։ Որ ընտրեցի իսկզբանէ։ թղ 51ա։ Դէորդ զօրավարի Քաջամսրափիկ-ը (վերնագիրն է, Շարական սրբոյն Գէորգայ զօրավարին), և մկը Ով սուրբ գէորգ։ 51ր։ Մէժին Ներսէսի, Սահակ Պարթևե, Բարսզի, Եփրեմի, Ոսկեքսանի, Գրիգոր աստուածաբանի, Խոնատիսս հայրապետի, Կիւրդի հայրապետի, Յոհաննու Երուսալէմի հայրապետի, Եւստուատիսսեանց, Երկուց բիւրուց, Մտելիսաննոսի Ուլնցոյն, Յովհաննու Աւճնեցոյն, Կնիկորդայոսի հայրապետի Մանկունքները, որոնք իբրև նոր շարականներ գըռւած են բաց գըռութեամբ։ Իսկ Սարգիս Երէցը ասում է այս ըոլորի համար, «Ե մանկան բազում շարակներ»։ Տէր Ներսէս կտթաւղիկոսն կլայեցին ասաց», թղ 223ր։ Այդ բազումներից մինն է՝ ինչպէս ասացինք, և այս.

«Շարական սըրոյն Կիւրդի հայրապետի».

101 դ). Որ աստուածային շնորհաւք զարգարեցեր զեկեղեցի հովիւ քաջ և վարդապետ, և ի զասս հըեշտակաց զազգս մարգկան հրաւիրեցեր սուրբ մկրտութեամբ լուսաւոր աւազանաւն մաքրազարդեալ զհոգիս ի հնացեալ մեզացն.

աղաչեմք զքեղ սուրբկ կիւրեղ, բարեխաւս լեր առ քրիստոս փրկել զմեղ ի մեղաց մերոց:

Որ զաւրութեամբ խաչեցելոյն յազթեցեր յուլիանոսի անաւրեն թագաւորին. և մատուցեր զքեղ պատարադ երկնաւոր սուրբ թագաւորին. զմանկունս եկեղեցւոյ բարձրացուցեր յաստուածային նոր պատուիրանացն. աղաչեմք զքեղ'.

Որ գերազոյն քան զարեգակն պայծառացար ի զասս սուրբ հայրապետացն. վերափոխեցար այսաւը յիմանալի յերկնային խորանսն. բարձրացուցեր վառաւք քան զամենայն զաղգս թորգոմայ. աղաչեմք զքեղ'.

Սարգիս եւէցը ասում է իւր Տօնացուցում, «Եւ, Յոհաննու երուսաղէմի հայրապետին հցն. ձգ. Որ զանչափ քո զը (արեւաբութիւնդ). մկ. զնորն ասա. Մանկունքն նոր սիօնի. և թէ ոչ Զառաջնորդու և զհայրապետու (տպ. «և զվարդապետու»)». թղ 233: «Երբորդ շաբաթն. Յովհաննու երուսաղէմի հայրապ. և Արդիշոյ և Նմաւոնի եպիսկ' և այլ անթիւ ըազում վկայից, որ և պարս կատարեցան». 680 Մանրուտումն կամ Խաղփիր, թղ 180ա: Մանկունքի՝ Վանկունքի նոր սիօնի, հեղենակն է Շնորհալին, տես համար 101. յայտնի և տպագրուած լինելով՝ չպին:

Քառասուն մանկանց պատուական շաբականակը՝ մժր 840 Նարականի գրեչը (անունը անյայտ) ընծայում է Մեսրովը թարգմանչին առելով, «Կանոնին որբոց Քառասոնից» Ասացիալ Մեսրովայ Տարօնիցոյն. օրհ. գկ. Այսօք ընդ անմարմնոցն գասս պարեն»* թղ 63թ: Կնկատի առնելով Քառասուն մանկանց հին շաբականների գրութիւնները և նրանց մեջ զեղուած, խռնուած Երդ գարեն ոչ յատուկ և անսովոր բարդ բառերի գործածութիւնը, մենք հաւանական չենք համարում, որ Թարգմանիչը լինի նրանց հեղենակը, այլ այդ շաբականները յօրինուած են Երդ զարում, և ո՛վետէ, զուցէ զըել է Անանիա Նիրակացին իւր ուրիշ շաբականների հետ: Ահաւասիկ այդ բառերը. լուսապատի, բրիստուամիր, սառնապատ, եղկացուցանի

(ջուրը մատնագոլ անել), վերանորովել, նախակուշակ, համահաւաքի, դիմամարտել, բացանանանչ, վերակարգալ, վերերգել, հառապայթաբակ, հօտապետ և այլն։ Կամ գրելէ ԺԱ-ՐԳ դարում «Սիսիանոս վարդապետ Սեբաստացի, որ ։ Քառասուն մանկանց վրայ ընտիր և գեղեցիկ ներզողեան մը շարագրած է ։ ։ Խորագիրն է. «Երանելւոյն Սիսիանոսի վարդապետի խօսք առացեալ յամենաժողով տօնի սրբոց Քառասոնիցն և ի նորհութ սրբոց քառասոնրդացն աղուհացից»։ Պատ. Հին Դար. Զարք. 1836. Վնտկ. 586։ Քառասուն Մանկանց շարականների հոսւթեանը լաւապէս ծանօթ են երեսւմ Կիրակոս Պատմագիր, և մեր ժէ Նարականի գրից Սարգիս Երէցը, ու գիտեն սրոշել, թէ Նրանց մին է հին և ո՞րը նոր սակայն ափսոս որ այդ որոշման հետ նոքա անունով չեն յիշատակում հների հեղինակին։ զօ. Կիրակոսը խօսելով Շնորհալու՝ Քառասուն մանկանց վերայ յօրինած շարականի մասին՝ ասում է, «Եւ մի (շարական) Քառասոնիցն» Պատ. Կիր. 1858. Մոսկ. 66։ Նոկ Սարգիս Երէցը իւր Տննացում Կիրակոսի յիշատակած այդ մէկ շարականին «նոր» է անուանում՝ առելով, «Ն՞ր Տաւն սրբոց Քառասոնիցն։ շարական հցն իւրն։ և զնորերն այլ ասայ։ ի Մարտի թ է»։ Թղ 233ր. Արդ՝ ըստ Սարգիս Երէցի այդ նորերը՝ որոնք ըստ Կիրակոսի գրել է Շնորհալին, են սոքա, Այսոր գանդադիելի մարտիրոսացն, և Այսուր մեծապէս պանձացեալ յայտնի Օքնութեւնը (տալ, ձշ), որոնք բաց գրութեամբ զբուած են՝ Երեք տանից բաղկացած Այսոր բնի անմարմնոցն զառ պարհն յայտնի հին Օքնութեան տակ։ Շնորհալին իւր այս շարականները դրել է քայլ առ քայլ Քառասոնից մանկանց հներին հետեւելով. զօ. Հին Օքն. Ա. տան մէջ, Որը ի սերասահայ ճզութեամբ պատերագմեալը յաղթեցին Թշնամույն։ բարիխառնութեամբ սոցա բրիսոսս խնայիա ի մեզ։ Շնորհալու Այսօր գանդադիելի Ա. տան մէջ, Որը ի սերասահայ պատերագմեալը ընդ Թշնամույն յաղթեցին բացութեամբ։ սոցին պատշուար բրիսոսս խնայիա ի մեզ։ Հին Օքն. Գ. տան մէջ, Տաղնապէին ի լմին սուուցիւոյ յանտանելի առնչանացն [լր, կէ անտանելի տանջանաց։ իթ անտանելի տանջանացն]։ Շնորհալու Այսօր գանյաղթելի Բ. տուն, Այսօր անտանելի չարչաբանօր նահատակար ի լմին սուուցիւոյ։ Հին Օքն. Գ. տան մէջ, Զայս ի յերկինս ճամբարին ոլը եւ զօգնութիւն ի քէն խնդրէին։ Շնորհալու Այսօր մեծապէս Գ. տուն, Այսօր

ամբարձեալք զաւս իւրեանց յերկինս, կոչելով զրեղ տէր յօդ-նութիւն։ Հարց Գ տան մէջ, Բոլորեալ պսակս յանմատոյց լուսոյն։ Ենոքհալու Այսօր մնծապէս Գ տան մէջ, Բոլորեալ պսակս յանմատոյց լուսոյն։

Նըբամիտն Հ. Աւետիքեան Տօնիս ընդհանուր շաբականների համար գրում է, «Զշաբական քառասուն մանկանցն սեբաստիոյ ոչ զիտեմք հաւաստի՝ ոյր եցէ արարեալ» ի պատմութեան Կիբակոսի՝ ընծայի շնորհալւոյն ներսեսի։ Թէպէտ կազմութիւն բանիցն, և յարմարումն եղանակաց ոչ ցուցանէ զայն հարթ և դիւրընթաց ոճ, որ սեպհական է շնորհալւոյն։ Ունիմք ի ճառընտիրս զնեբրողական առասպառութիւն յաղագս քառասնիցն՝ յօրինեալ ի Սիսիանու հայոց վարդապետէ։ յօրմի; երեի առեալ ինչ ինչ յօրինող շարականիս։ Որք միանգամ տեղեակը են վկայաբանութեան նոցա, ոչ դատանեն զնսեմութիւն ի բանս շտրականիս», Բաց. Նար. 181։

Մեծացուսցէս յօրինուած է քառասուն Մանկանց հին շաբականների հետեւզութեամբ, ինչպէս կտեսնէ ընթերցողը։ ՃԲ. և ԺԳ-ը դարերում մեր նախնիք սկսեցին հասարակ տօններին ևս Մեծացուսցէ ասել։ տես համար 42, 43, 45, 49, 60, 76։ մինչդեռ ըստ օրինի Մեծացուսցէն ասում էին ի ճնումն միայն Կիբակի օրերում և Տէրունական տօններին, «Ի՞ն. Խոկ կիւրակէին։ զինի Հարցինն՝ Մեծացուսցէ ասել»։ Կանոն Յոհան Օձնեցու։ Մատ. Նիմնեց. 1833։ Վնտկ. 29։ Մեծացուսցէիս հեղինակն ինձ անյայտ։ Անյայտ է ինձ նաեւ՝ իւր տակ գրաւած Հրաշափառ հնձանահարք Համբարձու հեղինակը։

Քառասուն Մանկանց շաբականների մէջ եղած մութ կէտերը պարզաբանելու համար, Սիսիանոսի պատուական ներբողից քաղուաժօրէն դնում ենք այստեղ Քառասուն Մանկանց պատմութիւնը։ զօ. ով էր այն բռնաւորը, որի համար ակնարկութեամբ ասում է Շաբականը, «Եւ զմոլութիւն անօրէն բռնաւորին։ վանեալ (Օքս. Բ տան մէջ)։ Կամ Հերքեցին (քառասուն մանուկները) զմոլութիւն անօրէն կուապաշտութեանցն (Հարց. Ա. տան մէջ)։ Ի՞նչ մոլութիւն էր այդ։ Կամ ով էր այն հօտապետը կամ եպիսկոպոսը, որին տեսնիքով յայտնուեց ուղարքոց նշանաբները ժողովել ու պահպանել, որի մասին կարգում ենք, «Նախադուշակ տեսլեամբ հօտապետին յայտնիալ զգանձս հոգեւորս իւ բոցամանանչ հրաշիւք ի փայտումն

նշուլիցն համաւաքեալ ի հոսանս ջուրցն (Հարց Ե տան մէջ): Կամ՝ սայլերի վերայ լնչ էին բարձած, որ յիշատաւկում է նոր համբարձին իւր Դ տան մէջ, ասելով, «Դոր սայլըն բարձեալ տանէին»:

(10 Երես+) Դժնդակն ի թագաւորս և կիկանէ մեծամեծացն տայր պատուէր սպանանել զքըիստանեայմն: (11) Արդ սոքա ըմբռնեալ լինէին ի նմին ժամանակի վասն Քրիստոսի հաւատոցն և խոստովանութեան յանօրէն դատաւորէն Սեբաստիոյ քաղաքին. Հարց և փորձ առնէր վասն հաւատոց նոցա, բռնադատէր ապա զնոսա հաւանել և զոհել աստուածոցն: Նոքա այնուհետեւ խոստովանէին զՔրիստոս միայն ճշմարիտ աստուած ոչ զանդիտէին ի ցասմանէ: (12) Ի մի բերան տային պատասխանի քրիստոնեայ եմք, Քրիստոսի ծառայք: Քաջալերէին զմիմեանս անշարժ կալ յիւրեանցն Փրկիչ զաւանութեամբ: (13) Կապեցին ապա զսուրբոն և արկին ի բանդ, թերես ահացուսցին զնոսա: (15) Սուրբքըն աժան առաջի անտրտում և զուարթ երեսօք: Ուստի և յանդիմանեցին աստուածիմաստ բանիւք զնոտի նոցա պաշտամունա: Սրբոցն զայս ինչ համարձակ խօսեցեալ, սաստ սպառնալեացս շարժեցաւ: Հրամացեցին սպասաւոք զօրացն հարկանել քարիւ զբերանս նոցա: (22) Նկատէր ապա յետը զուրտ անօթոց տանջանացն և դտանէր զդժնդակն ի մահաբարս: Գիշեր մի պարզ և ցուրտ դառնաշունչ օդով կապեալ զտմենեսնեան ի միասին մերկս զսուրբոն արկանէր ի լիմ մի ծովու մերձ ի քաղաքն: Սոսկամ ամենայն անդամօքս, յասել զգառն չարչաբանաց բանսն: Սաստկաննայր դառնութիւն օդոյն+ պազէր այնուհետեւ ջուրքն, մածնոյր ընդ մարմինսն, ճարճատումն (23) ոսկերացն առնէր+. արիւնն հոսէր վատակաբար երբեւ զյորդահոս աղքբւը+ ներկէր ապա չուրքն զանսովորն զոյն կարմիր: (24) Խոկ որբոցն սէր անարտախզելի առ յուսալին իւրեանց: Եւ իրքեւ ցրտութիւն խըստութեամբ զօրանայր, մի ի նոցանէ (25) արտարս և լանէր ի սուրբ զնդէն, առ չժուժել նեղութեան սառաւամնեաց անկանէր ի բաղանիսն, զոր չարահնաբքն էին պատրաստեալ վասն այնպիսի պատրանաց: (26) Ոչ այնքան ցաւադին էր սառամնեացն խստութիւն, որչափ պակասումն եղբօքն ի թուոյն: Ի վեր յերկինս զաչս համբարձնալ արտասուահոս պաղատանօք աղերսալի մաղթանօք, զտարածումն ձեռաց առ.

Քըլստոս վերաբերեալ, զօդնու թիւն խնդրէին՝ մի քայլքայել ի միմեանց և մի պակասել խորհրդական եւսեանց ի թուռյն։ (28) Զայս առելով ի մէջ այսպիսի վտանգիցն, ահա յանկարծակի զարմանքը սքանչելի և տեսիլ սոսկալի։ ի նմին ժամու գեշերոյն ծաղեաց շուրջ զնոքօք արեւ հալեցաւ լուծաւ պալն, և եղեւ ջուրն ջուր բարիոք և ջերմ։ (30) Մի ոմն (ի պահապանաց) ոք արթուն կայք, և տեսանէր զնոսա ուրախ լեալ ի յերգա Աստուծոյ, և պատկս իշեալս ի վիրուստ երեսուն եւ ինն զարմանալորձ Սիրտ նոր ստացեալ, մերկանայր զգեստն, ի ներքս վազէր ի լիճն խնդալով ի գասս սրբոցն։ Տէր աստուած, ի քեզ հաւատամ, յօր սոքայս հաւատան։ ընկալ և զիս, համարեա ի թիւ որբոցս, զի և ես գաայց ի սոսա։ (31) Յախացայց յոյժ ուրախութիւն մեծ, զի նիւ քառասնեկին լցեալ եղեւ և խնդութեամք լցոյց զտրտմեալոն, զի այլ ոչ ևո ոք պատրի արտաք եւ լեալ ի բազանիոն։ Ապա առաւոտ լինէր։ և ըըռնաւորքն անգր հասանէին, զբանդապանն ընդ նոսա տեսանէին և զարմանային։ ասեն, տեսաք լոյս զնոքօք շուրջ որպէս զարեւ։ (32) Զայս լուեալ զայրանային, և տուեալ հրաման քարշել ի լճեզրն և ըրօք ջարգել զբարձս նոցա։ Մայք միոյ՝ ուրումն ի սրբոցն անմեկնելի առ նոսա մնայր քանզի մանկադոյն էր Քթթել ական իւր չտայք թոյլ, այլ ցանկ առ նո պշուցեալ, առեր մայրագորով բանիւք։ Քաղցրեկ որդեակ։ սակաւեկ մի համըերեա, մի եքինչես, Քրիստոս հասեալ է յօդնել։ (33) Սուրբ վկայքն խորտակեալք ջալոտիւք՝ խնդութնամք աւանդեցին զհոդիս իւրեանց, ապրեալք յուրոգայթէ որսողաց։ (34) Սայլս ապա հրամայեցաւ ածել և բառնալ զիարմինս նոցա և տանել ի տեղի այրման։ Խոկ զպատանին Խեղիտոն թողին անդքէն՝ յուստալով զապօւստ նորա, զի զեւ ևս կենդանի էր։ Այլ մայքն, ի յուս բարձեալ զմանուկն ընթանայր։ մայք մարտիրոսի ցանկայք լինել։ և արագ հասանէր ինդքոյն։ Խճանապարհին լուծանէր հոդին ի մարմնոյն և մտանէր առ Աստուած։ աարեալ զկնի սայլիցն ի բանակն մաքուը ընկենոյր։ Նոյնհետայն հուրն (35) սուրբոքէր, մարմինք սրբոցն (Եղեն) ողջակէզք կատարեալք։ Ապա խորհուրդ առնէին եպերելիքն պատուական սոկերացն այրելոց կորուսանել ջրով։ (36—37) տեսիլ երևեցեալ եպիս-

կոպոսի քաղաքին յետ երից աւուրց, և ցուցեալ
յայտնագոյն նշանիւ զոեզին, յորում կային հաւա-
քեալ սուրբ ոսկերքն, և գեշերի երթեալ հրաման
տային առնուլ յուղից գետոյն. Առեալ սրբազան
տեսուչն Պետրոս զուխտ քահանայութեան, և տեղին
հասանէր, հանդիպէր մեծի փափագման լուսոյ; Սըր-
բապէս ժաղովեալ եղեալ և միասին ի տունս ազօ-
թից և տաճար տէրունի. Երդ օրհնութեան և տօն
խնդութեան կատարել: (38) Յապագաց ազգաց և
տօն տարեկան հրամանաւորեալ: Խոկ արդ և մեք
որ արժանաւորեցաք տօնախմբել և ուրախութեամբ
հոգեորականաւ զուարձանալ և յիշատակի սրբոց
քառասոնիցն, տեսաք զպատութիւնս ոոցա հանդիւ-
սին, որչափ բաւական եղե մեր տկապութիւնս: Առա-
ռելոցնուում է (46) «Կանխազոյն ևս էին սոքա ամօք
ինչ քան զժողովն ասաուածազան, որ զումարեցան
ի նիկեայ՝ Կոստանդնու հրամանաւ: (47) Այսոցիկ
սրբոց հանապազ տօն յիշատակի և ոուրբ քառասո-
ներորդ պահոցս հանդիպի: (48) Արդ տօնեսցուը,
եզրասք, զաօն որբոցն, և տացուք աւուրս զպար-
տական օրհնութիւնս արժանաւորապէս»: Ասիրը
Հայկականը. ԺԲ:

«Սըրբոց Քառասոնից»*

102 ԵՅ. ՏԵ. Ուրախ. ածա. խորհր. հօր անե. և մա. էակա.
բա. հով. ք. ս. հոգ. ի բնա. թ. քու. էակ. այս. լ.
մկ. աշ. բան. զք. մի. մեծ.

Մորե. անկ. վառ. հըրո. ածա. ի քէ. յայ. եա. հու.
ածա. իջե. ի ծո. սառ. որո. ետո. զպըս. փառ. երա. եա.
ոըր. քառ.

իման. ծովզե. նաւ. վա. ի քե. որդ. զըթ. իսկ նա.
պետ բնո. մեր. իջե. իմէ. քու. որպ. երբ. իմէ. հն. քաղց.
եա. զպազ. լըճ. այ. [Եռւուանցում մանր տառերով գրչի
ձեռքով գրուած է, «Մի տակը զի մէկ ցիդ չէ»]:

Այս Աեծացուցէն մինք կարդում ենք.

Ուրախացիի աստուածածին խորհրդաբան հաւր ա-
նեղին և մայր էական բանին. հովանացեալ քեզ սուրբ
հոգին ի բնակութիւն քում էակցին. այսաւը մանկունք
աւրհնաբանեն. զքեզ միշտ մեծացուցանեն:

Մորենի անկիզելի վառեալ հըրով աստուածային ի քէն յայտնեալ հուրն աստուածային. իջեր ՚ի ծով սառուցեւ լոյն. ²որով ետուր զպլսակ փառաց հերանեալ սրբոց քառամնից:

Իմանալի ծով (գե . .) նաւափարեալ ի քեզ որդիկ գթած. իսկ նաւապետ բնութեանս մերոյ ՚իջեր ի մէջ քառամնից, որպէս երբեմն ի մէջ հնոցին. ³քաղցրացուցեր զպաղումն լըճին. ոյսաւր մանկունք աւրհարանեն. զքեզ միշտ մեծացուցանեն:

Գտնուում է լը 98ա.

103 ՞Յ. ՞Հ. Հիմաշափառ հնձանահարք ի ձեզ հանգեաւ էակն ի յեից. պարծանք եկեղեցւոյ և ուրախութեան բաժակ տրտմեցելոց. բարեխաւսեցէք առ հայր ի յերկինս վասն տաւնողացս զյիշատակս ձեր:

Դժնեա տանջանաւք խլեցէք զորո՞ն ապականիչ. և զանծախն անձանց չնորհեցէք զանապական պարգես. բարեխաւսեցէք առ որդին միածին վասն տաւ".

Ի քակաել ոգւոց ձերոց ժողովին նշխարք ուղղափառաց, և արկանի յըշտեմարանս արքային երկնից, զոր սայյըն բարձեալ տանեին. բարեխաւսեցէք առ հոգին ճշմարիտ վասն տաւ".

Գտնուումէ լը 103բ. ժէ 160ը 163ը. (Հը և ձշ): Սարգիս երէցը գրում է իւր Տօնացուում Լուսաւորչի համար սահմանուած երեք տօների առեթով, «Գշ. Սբոյն Գրեգորի ելն ի վերապէս. հցն. զնորն առա. և թէ ոչ Որ առաքեցեր [Լուսաւորչի հին Հարցը]. ի Սահմի տանն». թղ 226ա: Այս տօնի Երկուշաբթի օրը տօնեումէ Սարգսի և Բագոսի տօնը, Քիշ. Սարգսի և Բագոսի. ի Սահմի ՚Ն.» թղ 225ը: Լուսաւորչի Երկուրդ տօնը

4 Օրհ. Գ տան մէջ, ի լմին սառուցելոյ. 2 Հարց. Գ տան մէջ, Բոլորեալ պասկս յանմատոյց լուսոյն. 3 Օրհ. Զ տան մէջ, Երանելի քառասունըն. 4 Օրհ. Ե տան մէջ, նշեր ի մէջ սրբոց բոց. Ող. Բ տան մէջ, ի մէջ քառասնիցն. 5 Ցը. Բ տան մէջ, Զպաղումն լմին եղացուցիր. Ճշ. Բ տան մէջ, Զդառնութիւն սառնամանեացն հաւատով քաղցրացուցին:

ի նախնեաց կոչուել է «Դիւտ նշխարաց սըբոյն Դըի-
գորի և ուսաւորչին»։ Ժդ 417թ. իսկ ի պատիւ 1.ու-
սաւորչի՝ ընդհանուր հայ ժողովը գեան պահած շա-
րաթական պասին Սարգիս Երէցը կոչում է «Պահը
սրբոյն Դըիգորի», և ապա գրում, «Նը+ Տաւն սըբոյն
Դըիգորի, հցն Որ առաքեցեր զօ(երելի և զհաւատա-
սիմ քո պաշտօնեայն)։ և թէ գիտես զնորն։ ի Տըէի
ժ»։ Ժդ 226ա։ Իսկ 1.ուսաւորչի նըրորդ տօնը թէ ի՞նչ
անունով է յայտնի Եղել մերթղին, յառաջ Ենք բերում
մի հեն արձանակրութիւնից այդ խորհրդաւոր անունը։
«Ես տէր Յաւհանէս և միաբանքս սահմանեցին ի տաւնի
ոուրը Գրիգորի Խակամի շաբաթ աւրն և Նաբաթն և
Կիւրակէն։ պատարագ»։ Արձանն Հաղբատայ. Սարգիս
Եպիսկոպոս Զալարեան ձանապարհ. Ա. 71։ Այս Տօ-
նին՝ մեր 680 Խազզրի կամ Մանրուսումն կոչուած
մատեանի Գրիչը՝ Ստեփաննոս քահանան, իւր պատ-
ուական Տօնացուցում՝ որ գրել է Խազդըքի հետ
միաժամանակ Հայոց Զիէ(=1278) թուրին, կոչում է
«Մուտն ի վիրապն»։ «Հենդերորդ շաբաթն աւրն
Գրիգորի լուսաւորչի մուտն ի վիրապն»։ Ժդ 180թ.
Տօնիս համար գրում է Սարգիս Երէցը, «Նը+ Տաւն
սըբոյն Դըիգորի հաոց լուսաւորչի+ հցն և շարակներն
զնորեցն ասա։ և թէ ոչ Որ առաքեցեր. Տըէի տասն»։
Ժդ 233թ։ Այժմ տեսնեաք, թէ որո՞նք են Սարգսի
յիշատակած այդ նոր Հարցը եւ շարակները, որոնցով
երախտագիտական զգացմունքով կատարում էին
Հայոցս մեծ և անդրանիկ Հայրապետի—սըբոյ հօրն
մերոյ Գրիգորի լուսաւորչի «Մուտն ի վիրապն»։ Տօնիս
առեթով կան Երկու Պատկերից կամ Երկու Կանոնից
քաղկացած շարականներ, որոց մէկի մէջ պարու-
նակուած շարականները պատկանում են Ժի-ըդ գաւ-
րին, իսկ միւսը Ժի-ըդ գարեին։ Առաջին Կանոնը կամ
Պատկերը տալիս է մեզ մեր լր Նարականի գրիչը,
որի անունն է Առաքելու ուսափ և Առաքելը ընժայումէ
իւր Խորապով այս շարականները».

«Ծարսմի աւր Դըիգորի Լուսաւորչին».

- Դէ. Որ յանձառելի փառաց միաձնին.
- Ցնծա այսաւր եկեղեցի Հեթանոսաց.
- Հ. Որ ի հաւրէ առաքեալ արեգակն արդար.
- Ա. Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարսանիս.
- Այսաւր զիմանալի լուսոյն ծագ[աւղն].
- Դէ. Այսաւր տաւնէ եկեղեցի ուրախութ».

Նըբամիտն Հ+ Աւետիքեան տօնիս Հարցի առեւթով դրում է, «Զհարցն լուսաւորչին, Որ ի հաւրէ առաքեալ, ոմանք Մովսեսի խորենացւոյ տաեն արարեալ իւր սարօն, ըստ որում ի նշանագրութիւնոյ յօրինողաց շարականաց զնի՝ զՓրեգորին [շարականաները] համարել Խորենացւոյն; Սակայն տարակուուելի է՝ թէ արդեօք վասն այսր շարականի իմանի այն, թէ վասն միւս ամբողջ շարականին, Ով երջանիկ տէր սուրբ զրիզոր, մանաւանդ զի աստանօք եղեալ Հարցն և այլ Ընորդք իւր՝ զյետին զարուց ուն առաւել յինքան բերեն, քան Խորենացւոյն; Օրինակ ինչ ընծայէ ներսիսի շնորհալոյն» Բաց. Շար. Եր. 195; Այս՝ որպէս Լուսաւորչի Որ ի հօրէ Հարցը իւր սորօք, այսպէս և նրա նոր Օրհնութիւնը, Որ յանձառելի վասաց, գրել է ներսէս շնորհալին, պահելով Օրհնութեանո մէջ այն աղը, որով զանգուած են Որ ի հօրէ Հարցը իւր սարօք:

Երկրորդ Կանոնը կամ Պատկերը առալիս է մեզ մեր ժէ Շարականի գլուխն Ասրդիս երէց: Այս արժանայիշշատակ քահանան էլ ընծայում է այս շարականաները իւր Խորազրով:

«Կարդ սրբոյն Գրիզորի լուսաւորչին. աւընութիւն».

- Դէ. Առակալի տեսիլ աստուածային.
- Յո. Ի հաւրէ զարդարեալ Հայրական.
- Դէ. Որ ի հաւրէ առաքեալ արեգակն արդար.
- Ա. Որ կոչեցեր զհեռացեալքս ի հարսանիս.
- Փ. Այսաւը զիմանալի լուսոյն ծագաւզն.
- Դէ. Ա. Այսաւը տաւնէ եկեղեցի ուրախուր.
- Աէ. Անձառելի շնորհաւք տուար զաւակ.
- Յո. Ֆ. Ով երջանիկ սուրբ գրիգոր քաջ և յաղթող.

Խոկ այս շարականների նորութեան և նրանց հեղինակի մասին այսպէս է ասում Սարդիսը իւր Յուցակում. «Եւ զսութք Գրեգորին զնորեցն»: Տէր ներսէս կաթաւզիկոսն ասաց»: Թղ 223ր: Տեղեկացանք Հ+ Աւետիքեանից հարցը իւր սարօք «Օրինակ ինչ ընծայէ ներսիսի շնորհալոյ, և այս ըանին՝ ինչպէս տեսնում ենք, Սարդիս երէցն ևս համաձայն է: Մենք էլ Օրհնութեան և Հարցի՝ իւր սորօք, միանման գըութիւնը աչքի առաջ ունենալով, յայտնեցինք, որ Օրհնութիւնն ևս գրել է նորհալին: Արդ հանելով այս

Պատկերից Առաքելի և Սարգսի մէջ ըերած Հարցը եւը
ուսկօք, կմնայ լոկ Օթնութիւնը, Համբարձին և Ճաշուն իսկ
այսպատճեական շարականները գըել է՝ Առւսաւ որչե
և իւր արժանաւոր ազգատոհմի—որդւոց և թռուանց
պատճութիւնը երգերով մեղ աւանդող, Առւսաւորչ
տան քնարերդուն—Երզնկացի Պլուզ Յովհաննէս վար-
դայինտը; Թէ իրօք այս նոր շարականներն ես պատ-
կանում են Առւսաւ որչի հանգստեան—Սեպուհ սարի
գովառանքն անող սրբակրօն վարդապետիս, Երսև հա-
մոզեցուցիչ փառատ տալիս ենք Ընթերցողին նրա գրած
Սնմինքի (Այսաւը զուարձացիոլ), նոր Օթնութիւնս, Համ-
բարձու և Ճաշուն համեմատութիւնը. Ուսենք Օթնու-
թիւնից, որի տների գլխազըները կապում են Սուրբ Գրի-
գոր: Օթն. Առաջափ տեսիլ աստուածային հրաշիցն: Անձինք. Ո
տուն, Սոսկալի տեսլեանն ի վերուստ յայտնեալ: Օթն. Է
տուն, Բարունակ ծավկեալ յաստուածային տնկոյն: Անձինք.
Յ տուն, Բարունակ ողկուզարէք մշմարիտ որթոյն: Օթն. Ժ
տան մէջ, Գործակից զոլով սրբոց մարդարէիցն եղիայի եւ
յովնաննաւ, ի զուսի լերանց յայրս եւ ի ծերպս վիմաց ազօ-
նեալ հանգեար: Անձինք. Յ տան մէջ, Յանապատի բնա-
կեցար հանդոյն յոհաննու եւ եղիայի մզնեալ: Օթն. ԺԱ. տան
մէջ, Բարունի ընտրեալ, մշմարիտ հովի բարի եւ բանա-
նայապետ: Անձինք, Յ տուն, Բարունոյն հրամանաւն ի վե-
րուստ կոչեալ: Օթն. Վերջին տան մէջ, Աստուածազութ
ծնող սուրբդ գրիգոր մեղուցիալ որդւոց միշտ բարեխաւսեա:
Անձինք. Խ տան մէջ, Աստուածապութ ծնող հայր գրիգո-
րիոս, հայցմամբ ազաւթիւր առ հայրն երկնաւոր խնդրեա:
Հարց. Յ տան մէջ, Եզար ի խոր վիրապի վաստակեալ ժամա-
նակաւը ամոց եւ ամաց: Անձինք. Պ տան մէջ, Ի տան մէջ,
Ի խոր վիրապին իշեր ի աղմին ի մէջ դառնաշշունչ օմիցն: Հարց.
Յ տան մէջ, Վերաբերեալ սիրով ընդ քեզ զընկդմեալս ի խորս
անդնդոց: Անձինք. Զ տան մէջ, Զանկեալս ի յերկնից
ի խորս անդնդոց: Վերաբերեա ընդ թեզ յերկնային խորանան:
Ճ տան մէջ, Ի խոր վիրապին: Երբակի հնգիւր զթող
պարծանաց ի զովեստ փառաց անեղին դտար: Անձինք. Ռ տան
մէջ, Երիւր ննդոր ամօր ի վիրապին մզնեալ:

Օթնութեանս Առաջին մասի վերջին տան մէջ,
Երզնկացին իւր և ուրիշների համար այսպէս է
ազերուում Առւսաւորչին, «Անկանիմ առաջի քո սուրբ
նշխարացդ հայցմամբ բազկատարած պաղասանաւը, յիշեա-
չիր զմնզ առաջի բրիստոսի, ով առ սուրբ գրիգոր»:
Սա էլ թող համարուի մի ապացոյց, որ ինքն է գըել

պատուական շարականներս, և գրել է Սուրբ դրիգոր վանքում՝ որի անունը պահել է շարականիս տների գլխագրերի մէջ՝ ինչպէս ասացինք. և այս այն ժամանակ, եթք այս «Վամսքին միաբաններն՝ իրենց միաբանութեանը նոր կարգ մը տալու համար խնդրեցին ի Յովհաննէ, որ Կանոններ գրէ. ինքն ալ կատարեց անոնց խնդիրը, և գրեց «Կանոննը և սահմանը միաբանութեան եղաց, որ աստուածային սիրով միաբանեցան յեղայրութիւն միմեանց յեղնկա»։ Պատշաճ, դպր Զարք. եր. 734։

Եթքե պատասխան իմ այն խնդրին, թէ Երզնկայն մէջ կամ Երզնկայից գուրս արդեօք կայ Սուրբ դրիգոր անունով վանք, ստացայ գիւղիս ուսուցից, — Երզնկացի պ. Խաչատուր Փիրզիկեանից հետեւալ նամակը։

«Յ Յուլիսի 1911 Օշական»
Արժանապատիւ հայր սուրբ։

«Երզնկայն մէջ այդ անունով վանք չկայ. բայց քաղաքից չորս ժամ հեռաւաւորութեան վերայ, հարաւարեմուտք, գտնւում է Սեպուհ լեռը, որի գագաթից բաւականին ներքեւ շինուած է մի հին վանք՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ անունով, ուր Յունիս ամսին մեծ քաղաքութեամբ ուխտաւորներ, թէ Երզնկայից և թէ Կամախից (Ոնի ամրոց) գալիս են այնտեղ ուխտ։ Ես այդ տօնին ներկայ եմ եղել, բարձրացել եմ Սեպուհ սարի գագաթը, որտեղից թէ Երզնկան, թէ Եփրատը և թէ Հրջակայ բոլոր գիւղերը երեսում են։ Դադաթից բաւականին ցածր գտնւում է Մանեայ այրը, ուր ճգնել է թէ ո. Գրիգորը և թէ Հայոց Տրդատ թագաւորը։

Ա. Գրիգորի վանքից բաւականին հեռու ու ներքեւ, մի հովտի միջին, գտնւում է Շոխա անունով մի ուրիշ վանք, որ շրջապատուած է անտառներով, և այդ անտառները պատկանում են Սուրբ Գրիգորի և Շոխա վանքերին։ Շոխա վանքից աւելի ներքեւ, նոյն լեռան համարեա ստորանում գտնւում է մի ուրիշ վանք, որ կոչւում է Աւազ վանք, ուխտաւորները երբ դնում են Սուրբ Գրիգոր, պէտք է այդ վանքերով անցնեն։ Մնամ. . Խ. Փիրզիկեանց։

«Շաբաթի աւր Գրիգորի Լուսաւորչին».

104 Աւագ լուսաւորից միաժամկետ ծագեցար լոյսդ
Տարփիափայլը ճշմարիտ զաւակ ի սիօվն. որ յարեւելից փայ-
լեալ Հաղանց պարթեական, և յայտնապէս Յհովել զա-
նըսկիզբն հայր արարիչ բոլորից:

Որ արփիափայլ ծագմամբ երեւալ մարմնով ի ստոր
վիրապին անհիւթ աղաւնին. քանզի տեսեալ թանձրացեալ
զանմարմինն ի մարմնի, և էապէս փառաւորեալ զբանն
կենդանի Եկակից ընդ հաւը և հոգւոյն:

Որ Ղուսաղարգեալ ցուցար Ցի յերկրի իսկապէս վկայ
պանձալի. ուստի եկեալ ի մէջ մահաբեր չնչոց կենդանեաց.
և ընդհանուր Ցաւալեալ զհոգին ճշմարիտ փառակից Ընդ
հաւը և որդւոյ:

¹¹Որ զարարչականն ընկալեալ զպատուեր քարոզել զեռ-
թիւն միաժամկետ, երբորդութիւն կատարեալ ի մի տերու-
թիւն փառաւոք. և աստանաւը զանտեսն ի յէից տիրապէս
ծանուցեալ էից:

105 Ցնծա այսաւը եկեղեցի հեթանոսաց նորոգել զնորս
խրայել կոչմամբ Պրիգորի. զարգարեալ զէակս ի բնութիւն
մարմին հողեղէն, և պարազրեալ զանպարազրելին Հյանն
մարմին եղեալ:

Ցնծան այսաւը մանկունք վերին նոր սիօվնի, զուռն
արեւելեան կողմանց Հիւսիսոյ, քանզի Յաւծեալ տեսուչ
եկեալ բանաւոր հաւտին. և փարատել զմեգ խաւարին,
զլոյսն կենաց հեղեալ ի ձեզ:

104 * Հ. Ալիշան այս նոր Օքնութիւնը մուժել է իւս Ալյա-
րատ»ի մէջ. Երես 440; Հ. Ալիշանի և Առաքելի օրինակների մէջ
կան բաւականին տարբերութիւններ, որոնք և նշանակում ենք:

1 Առաքելի օր. յանձառելի. 2 Առաքել. մրածին. 3 Առաք.
արփիական. 4 Ալիշանի օր. ազանց. 5 Ալիշ. Յնչեալ. 6 Ալիշ. Հունի
էակից. 7 Ալիշ. լուսաւորեալ. 8 Ալիշ. Հունի ի. 9 Ալիշ. փառա-
ւորեալ զնողին. 10 Ալիշ. Հունի ընդ. 11 Ալիշ. Հունի ամրող
տունը.

105 1 Ալիշ. սրբոյն զրիգորի. 2 Ալիշ. բանն. 3 Առաքել. ցնծա.
4 Առաք. հիւսիսի. 5 Ալիշ. Հունի աւծեալ.

Յնձայ այսաւը անմարմնոց լազմութիւն միախմբելով
ի բնութիւն հողեղէն զի անճառ բանն աստուած երեեալ
մարմնով նի յերկրի, և պարակցեալ ընդ մեծապայծառ ճբգ-
նութիւնդ իսկապէս էացեալ ի քեզ:

Աշաւոր քում հրաշիւք միացար ի մարմնի, յանճառ-
ոելի ծնունդ հայրենի. համահաւոքեալքս ի տաճար սրբ-
րութեան պաղատիմք, քանզի և մեղ փառաւք ելանել ընդ
քեզ ով հայր վարդապետ և տէր:

† . . . ⁸ Բաղմազէմ չարչարանօք նահատակեալ յերկրի,
վշտօք և գելարանօք, իջանելով ի վիրապին՝ վերաբերեալ
զազքս հայաստանեայց ի լոյսն անստուեր: երանելի տէր
սուրբ զրիգոր, հայր և հովիւ ազգաց:

«Կարգ սրբոյն Գրիգորի լուսաւորչին. Ալբնութիւն»*

106 Դէ. Առակալի տեսիլ աստուածային հրաշիցն իմանալի
լուսոյն ի վեր քան զմիտս րարձրագոյն խորհուրդ քեզ
յայտնեալ. որ զբեզ ընտրեաց յառաքելական յաթու, ով
տէր սուրբ զրիգոր:

Որ վերին տեսչութեամբն աստուածային շնորհաւք
յորովայնէ ստեղծեալ. և ստացար շնորհս առաքելական
հայաստան աշխարհի լուսազարդ բանիւ զբանն կենաց
տնկեալ ի մէջ յեկեղեցւոյ:

Խիթիւ ամենասուրբ հոգւոյն ճշմարիտ հաւը և որդւոյ
փառակցիւ. աղբիւրաբար հոսեալ վտակ մշանջենարուզին վար-
զապետութեամբ. որով զուարձացեալ բերկրին միշտ ուրա-
խութեամբ եկեղեցիք սրբոցի:

Պարունեացն վեհից և բոլորից սրբոց եղեր առաջնորդ
անտանելի քո չարչարանաւք. և յաւետ արիաբար ժուժ-
կալութեամբ ժառանիզորդս արարեր զորդիս բաղումն լուսոյ
աստուածութեանն հաւը ընծայեցեր:

Բարունակ ծաղկեալ յաստուածային տնկոյն. անմա-
հութեան շառաւեղ մեղ շնորհեցար. որ զհողենորն արրու-
ցանես զուրախարար բաժակին, բանաւոր հաւտի քո աշա-
կերտելոցս նոր ժողովրդեանս:

105 6 Առաք. չունեի լ. • 7 Առաք. ընդ մեղ ալ. • 8 Այս մի տուն շա-
րականը, որ չկայ Առաք. օք' • մէջ, ինչպէս գրութեան ընթացքից
երեսում է, նոր շաբականի սկզբնաւորութիւն է:

Գերազոյն պայծառ և բաղձալի ցուցանիւր շնորհը
քո խմասութեամբդ. ևս առաւել սէրն քրիստոսի ի քեզ
կատարեցաւ. որ քոյին պարկեշտ ¹ վարուք ի մարմնի փայ-
լեալ երեւեցար որպէս անմարմին զուարթուն:

Պոպէից ազանց մաքրութիւն և տեսակ բարի բանաւոր
սեռից. հողանիւթ գոլով հետեւող անձառ. հրաշագործու-
թեամբ արփիակերպ հրանիւթ բնութեանն երկնաւոր ան-
մարմին դաւրացն:

Ի բարձրագոյն կամարն վերին մտիցն առաքինու-
թեամբ քո ի յերկրէ հասեալ ժամանեցեր. և երկնային
ճանապարհացն դուար գեղեցկապէս զնայիւք. դեւս ի մտի
եղեր ելանել ի մարմնոյ ի կենցաղոյս հովտէս:

Գերազարդեալ արփիահրաշ վայելչապէս համապայծառ
շնորհը քո յաւժարութեանդ. որ զվերջինս առաւել փոյ-
լեցուցեր զհանգէս քաջութեամբ խաչակիր կրօնիւք, միշտ
մեռելութեամբ աշխարհի խաչեալ:

Որոշեալ յերկրէ և ի ստորին կենցաղոյս յապակա-
նութենէ. գործակից գոլով սրբոց մարգարէիցն եղիայի և
յովաննու ի զլուխ լերանց յայրս և ի ծերպս վիմաց ազաւ-
թեալ հանգեար:

Պարունի ընտրեալ ճշմարիտ հովիւր բարի և քահա-
նայապետ աստուածային կոչմամբն, անկանիմ առաջի քո
սուրբ նշանաբացդ հայցմամբ բազկատարած պաղաանաւք,
յիշեսջիր զմեղ առաջի քրիստոսի, ով տէր սուրբ զրիգոր:

107 Յէ. Ի հաւրէ զարդարեալ հայրական շնորհաւք պատկեալ
հայր ազգաց բազմաց սուրբդ զրիգոր. հաւրն երկնաւորի
ճշմարիտ պատկեր:

Ի յորդւոյ առաքեալ որփիական սիրով ¹ հարազատ որդի
լուսոյ և տուրնջեան սուրբդ զրիգոր. որդւոյն աստուծոյ
կերպարան փառաց:

Ի հոգւոյն ընտրեցար հոգեւոր ² որդւոց լինել հոգւով
հովանի, հայտատանեաց հայր հոգեւոր սուրբդ զրիգոր. ա-
մենասուրբ հոգւոյն անօթ ընտրութեան:

Բաղմաչարչար նահատակ յետ քրիստոսի յոյս և ա-

106 | 2ԵԱ. վարիւք.

107 | 2ԵԱ. հայրադատ. 2 Լուսանցում արանց.

պաւէն Յաստուածագութ ծնաւղ սուրբք զրիգոր. մեղուց եալ որդւոցս միշտ բարեխաւսեաւ

108 ակ. հը. Անձառելի շնորհաւք տուար զաւակ թաղէոսի սուրբ առաքելոյն. ժառանդեցեր զիւսիս և զարեելս ընակչաւք գաւառաց մինչեւ ի մոււս կազրից աշխարհի, երանելի տէր սուրբ զրիգոր. հայր և հովիւ ազգաց և աշանց. անդադար բարեխաւսեա վասն անձանց մերոց:

Աշխատեալ մշակդ յերկրի, ապա եղար ի խոր վիրապի. վաստակեալ ժամանակաւք ամսոց և ամաց. վերաբերեալ սիրով ընդ քեզ զընկըզմեալս ի խորս անդնդոց, երանելի տէր սուրբ զրիգոր. ճարտար բժիշկ ախտաժետաց և ցաւադնոտաց. անդադար”.

Իշխանակից սուրբ պետրոսի և բանալի երկնի և երկրի. սիւն ամսոյ իջմամբ միածնին ոսկի ուռամբ ջախներ զզուիխն բելիարայ, երանելի տէր սուրբ զրիգոր. անշարժ չիմն և պարիսպ սուրբ եկեղեցւոյ. անդադար”.

109 ՅԵ. ՀԵ. Ով երջանիկ սուրբ զրիգոր քաջ և յաղթող հայրապետ. դաւանաւղ փրկչին և առաջնորդ հաւտի, ճշմարիտ արմատ աւրինացն տեառն, որ ժումկալեցեր առաքինութեամբ համբերեալ բանդից և զելարանաց. յաղթեցեր կարեաց հողանիւթ քնութեանս. լոյս ջահացուցեր հայաստան ազգի. հայցեա զթողութիւն ի վերնատուողէն մեղուցելոցս:

Որ խցեալ շիջուցեր զմահարեր բերանս թիւնաւոր աւձիցն ի խոր վիրապին. և անձառելի հրաշագործութեամբ երբակի հնգիւք զթագ պարձանաց ի գովեստ վառաց անեղին գտար. հայցեա զթողութիւն”.

Որ առանձնեայ ազաւթիւք բարձրանշան և սուրբ հաւատով շիջ պարթեական մեղապարտ յազգէն ծագեալ շառաւեղ մեղ տէր սուրբ զրիգոր. հոգեօր և սուրբ ամբծութեամբ բղիւեալ զցաւզ բժշկութեան զիւապաշտ աղզին առ ի յարշուցումն աստուածգիտութեանն. հայցեա զթողութիւն”.

107 Յ ԶԵԱ. աստուածապոյթ.

108 Կ ԶԵԱ. զարիւեալս.

109 Կ ԵՐԵԲ. ՃԱՀՈՒ. ՀԵՆ ՄԼ. (Հրաշափառ աստուած) Ա. աան մէջ, Ե պարթեւական մեղապարտ աղզին լուսաւորիչ մեղ շնորհեցեր.

Գանեռում է ժէ 72ր. 73ա ակ. Ոզ. Տըյ: 74ա բձ. Տըյ: Ժ 53ր կրմատ բկ. Մծ: ժէ 79ա գձ. Տըյ: 80ր գկ. 2 Տըյ: 81ա գկ. Ոզ: Նարականների հեղինակների գրտկան գործերին քաջածանօթ գրիչները Ապաշխատութեան շարականները միաձայն ընծայում են Մեսուրվ թարգմանչին: Թարգմանչիս այս գրական վաստակի մասին՝ Կարապետ եպիսկոպոս Ասանացին ԺՅ դարում գրում է իւր՝ Յաղագ փարուց եւ մանուան սուրբ եւ իրանիկ փարզապետին Մերովրայ Թարգմանչի եւ լուսաւորի երկի մէջ, «Եւ շարաքան եղանակ տպաշխարութեան ըստ թուոյ աւուրց պահոցն. զորս ընկալեալ երդէ եկեղեցի սուրբ»: 1266 Մէկ. Գործ. Առարիոյ. թղ 14ր: Այսպէս էլ ոմն Խաչատուր իւր՝ Հայոց 24թ.—1312 թուին ղրած հարուստ Նարակնոցի մէջ այս տեղեկութիւնն է հաղորդում. «Կանովն Ապաշխարութեան (լուս. Մեսրոպ վարդապետի ասացեալ»), Տաշ. Ցաց. 24 պր. 209 Երին. * թղ 3ր: Արա ման գրում է հին ու նոր շարականները ճանաչող մի յայտնի նոտար. «Զապաշխարութեանն.. ՄեսրոՊ վարդապետն է ոգեալ»: 704 Քարոզիր: * թղ 31ա: Մի ուրիշ գրիչ, «Մեծն Մեսրոպակ զկարգն Ապ շխառութեան»: 219 Առտուանացուն: թղ 7ա: Իսկ չգիտեմ ինչ պատմական աղքեւների կամ ցուցումների վերայ հիմնու ելով, մեր ժէ Նարականի գրիչ Սարգիս երեցը Ապաշխարութեան կարդից Թարգմանչին է ընծայում միայն Հարցները և Տէրյերկնեցները, իսկ Աղորմերը՝ Եենիկ վարդապետին, որ ապրեց ԺՅ գարում: «զԱպաշխարութեան հարցներն և զՏէրյերինցներն Մեսուապ վարդապետն ասաց. զԱղօրմէքն ապաշխ(արութեան) Եենիկ վարդապետն ասաց»: թղ 223ր: Այսպէս էլ Հ. Գարբիէլ Աւետիքեան ապաշխարութեան շարականների հեղինակի մասին խօսելով՝ ասում է, «Զկարդ շարականաց ապաշխարութեան ըստ ութ ձայնից առեն արարեալ սրբոյն Մեսրոպայ»: ապա աւելացանում է, «Օրինակի ինչ (Նարական) շնորհաւոյն ներսէսի ընծայէ զերիս ձայնո. այսինքն, ակ, բձ, գձ»: Տաց Երիշ. եր. 156: Մենք կարենութիւն տալով Սարգիս երեցի առածին՝ կասենք, որ ապաշխարութեան կարգից Աղօրմէրը չէր կարող գրել Եենիկը, որովհետեւ շարականներ գրելու կանոններին ժանօթ մի անձն՝ որպիսին Մեսրոպին էր, չէր կարող գրել Հարդիրը, Տէրյերինցները և թողնել Ողորմէրը. այս արամաքանութեան

հակառակ է: Խոկ Յենիկ վարդապետը, եթէ գրել է
մի բան, ո՞ւ գիտէ, զբածները թերեւս մեր յառաջ
ըերածներն են, կամ նման բաներ, որոնք նիւթով
և գրութեամբ նման են իւր գրած սրտաբուղլս
Ազօթքներին: աեւ Սոփերը Հայկականք: ԻԱ:

«Կանոն ապաշխարութեան».

ակ.հ. Զանձառ էռթիւն:

** Մեղայ քեզ տէր:

110 ** Աւրհնեցից զանուն քո սուրբ, որ միայնդ ես բարե-
լար և բազումողորմ աղաչեմ զքեզ յիշեա և զիս տէր
ի քում յարքայութեանդ:

Հառաջմամբ սրտիւ իմով արտասուառք լուանամ զան-
կողինս իմ: աղաչեմ զքեզ յիշեա և զիս”.

Որ զիտես զգաղտնիս իմ տէր, և քննես զծածուկս
սրտի իմոյ, աղաչեմ զքեզ յիշեա և զիս”.

111 ** Զքեզ աւրհնեն իմանալի զաւրութեանցն դապճն, տէր
և արարիչ գոլով երկնի և երկրի:

Խոնարհեցար ի հայրական ծոցոյ բանդ միածին որզի
աստուծոյ, և առեր մարմին ի սրբոյ կուսէն:

Տէր կարող և հզօր աւգնեա ինձ ի քում զալստեանդ,
դատաւոր կենդանեաց և մեռելոց:

բ3.հ. Ուղեղ են ճանապարհը:

** Մեղաք մինչեւ յերկինս:

112 ** Աւրհնեմք և բարերանեմք և առաւել բարերանեմք
զանուն քո՝ փրկիչ մեր, քեզ փառք վայել է:

Զկերպարանս ծառայի զգեցար որ տէրդ ես յաւիտե-
նից ազգի մարդկան, փրկիչ մեր քեզ վայելէ փառք:

Զյորդանան յուցեր աւազան անապական, լուսաւո-
րեցեր զազգս մարդկան, փրկիչ մեր քեզ վայելէ փառք:

բ4.հ. Աստուած հզաւը թափաւոր:

113 Ժ, Ուրախից ածա, վեհ, զո, վեր, պետ թյ, բձող տնո,
սրո, ակ, ձայ, ըզք, մեծ,

Որ և ծըր զտ, ար, զբարձ, յանց, առ, նախ, մօ,
պլու, սր,
Այս ծընը, նոր, աղ, բարձ, տրու, թ, հըն, աղ, ս'.

Այս Մհծացուսցին մենք կարդում ենք:

Ուրախացիր աստուածածին վերաւրչնեալ դովեալ
վերին պետութեանց բարձող տէրունի, սրովբէական ձայնիւ
ըզքեղ մեծացուցանեմք:

Որ և ծնար զտէր աստուած, զբարձողն յանցանաց
նախամօրն պարտեաց, սրովբէական ձայնիւ ըզքեղ մեծացու-
ցանեմք:

Այսաւը ծընար նոր աղամ, բարձող տըրտմութեան
հընոյն աղամայ, սրովբէական ձայնիւ ըզքեղ մեծացու-
ցանեմք:

.. Եկեսցէ տէր ի վերայ մեր:

.. Տէր զլուր միւսանգամ քո:

ԴՅ. Որ զերիս մանկունսն:

.. Ողորմեաց ինձ քրիստոս:

.. Քեզ վայել է օրշնութիւն:

114 ա. Տուք զփառս ամենայն երկիր արարողին մեր:

Յաւը հնութիւն ի նոր աւրշնեսցուք զտէր զի սքան-
չելիս արար:

Զի նա ասաց և եղեւ, նմա ամենեքեան սաղմոսելով
ասեմք փառք ի բարձունս աստուծոյ:

115 ԴՅ. Աստուած հարցն մերոց:

.. Մեղայ քեզ տէր քաւեա:

ա. Եկայք ժողովուրդք երկեղիւ երկիրապազուք սուրբ
երրորդութեանն և միաստուածութեանն:

Զոր սերորէքն երկեղիւ ծածկեն զգեմն և զուս, աղա-
զակեն զերեքորբեան զաւը հնաբանութիւն:

Փառաւորեսցուք զշայը անսկիզբն, զորդի անսկզբնա-
կից, և զսուրբ հոգին հաւասար:

116 ա. Տուք զփառս աստուծոյ:

Ի յերկինս հրեշտակք և երկնային զաւրութիւնք տուք
զփառս աստուծոյ:

Ի յերկրէ որդիք մարդկան և երկրածին կենդանիքս
տուք զփառս աստուծոյ:

Դիւսում հ. Օրհնեալ տէր աստուած հարցն:

« Զարհուրեալ զողացաւ:

« Ամենակալ քաւեա զմեզս իմ:

ԱՄ « Աստուած քաւեա զիս զմեզաւորս:

